ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/11

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6411-2019 գրությամբ «Արմես գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 12.02.2019թ. թիվ 39/02-15-72 գրության հիման վրա, 18.04.2019թ. «Արմես գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն 12.02.2019թ. թիվ 39/02-15-72 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն կողմից կազմակերպված «ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2019 թվականի 2-րդ արձանագրության թիվ 3.3 որոշմամբ 6-րդ, 9-րդ, 23-րդ, 24-րդ, 33-րդ, 38-րդ, 40- րդ, 42-րդ և 56-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Արմես գրուպ» ՍՊԸ-ը (այսուհետ՝ Ընկերություն):

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 534-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) 19-րդ կետի 3-րդ ենթակետով, գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 30.01.2019 թվականին հարցում է ներկայացրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, ինչպես նաև ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկելով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել Կարգի 11-րդ կետով նախատեսված որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն «եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում»:

Հիմք ընդունելով Կարգի 19-րդ կետի 5-րդ ենթակետը գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել Ընկերության ներկայացրած հայտը և գնման ընթացակարգը 6-րդ, 9-րդ, 23-րդ, 24-րդ և 40-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած, իսկ 33-րդ, 38-րդ, 42-

րդ և 56-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից հայտարարել հաջորդող տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով, առաջարկում եմ Ընկերության նկատմամբ կիրառել «Գնումների մասին» օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

3. <u>«Արմես գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.04.2019թ. գրությամբ դիմել է «Արմես գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6411-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

«Արմես գրուպ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է նիստերի օրվա ժամի և վայրի մասին, սակայն Մասնակցի կողմից որևէ անձ չի ներկայացել նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/11 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ կարիքների համար շինանյութի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արմես գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 29.01.2019 թվականի 2-րդ արձանագրության թիվ 3.3 որոշմամբ 6-րդ, 9-րդ, 23-րդ, 24-րդ, 33-րդ, 38-րդ, 40-րդ, 42-րդ և 56-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Արմես գրուպ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 06.02.2019 թվականի 3-րդ արձանագրության համաձայն՝ 6-րդ, 9-րդ, 23-րդ, 24-րդ, 33-րդ, 38-րդ, 40-րդ, 42-րդ և 56-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկվել է ներկայացնել « ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-19/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

«Արմես գրուպ» ՍՊԸ-ն պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չի ներկայացրել, ուստի

գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» կարգի 19-րդ կետի 5-րդ ենթակետով գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության ներկայացրած հայտը և գնման ընթացակարգը 6-րդ, 9-րդ, 23-րդ, 24-րդ և 40-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած, իսկ 33-րդ, 38-րդ, 42-րդ և 56-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից հայտարարել հաջորդող տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6411-2019 գրությամբ «Արմես գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում,
- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո, ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:
- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման

խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու» կարգի՝ 16-րդ կետի համաձայն հրավերով նախատեսվում է, որ՝

1) բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պահանջվող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուղարկում է հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակտի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը,

Նույն կարգի 23-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման

չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 24-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Հանձնաժողովի 06.02.2019 թվականի 3-րդ արձանագրության համաձայն՝ 6-րդ, 9-րդ, 23-րդ, 24-րդ, 33-րդ, 38-րդ, 40-րդ, 42-րդ և 56-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած «Արմես գրուպ» ՍՊԸ-ին առաջարկվել է ներկայացնել «ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-19/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

- «Արմես գրուպ» ՍՊԸ-ն պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չի ներկայացրել:

Վերոգրյալի հաշվառմամբ գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության ներկայացրած հայտը:

Տվյալ դեպքում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել հրավերով նախատեսված փաստաթղթերը, որպիսի պայմաններում այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արմես գրուպ» ՍՊԸ-ն, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով հրավերով նախատեսված փաստաթղթերը, խախտել է

գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6411-2019 գրությամբ «Արմես գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Արմես գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու (2) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ